ԵԿԵՂԵՑԱԿԱՆ ԺԱՄԱՆԱԿԱԳՐՈՒԹԻՒՆ

Կ. ՊՈԼՍՈՅ ԱԶԳԱՅԻՆ ՎԱՐՉՈՒԹԵԱՆ ՀՐԱԺԱՐԱԿԱՆԸ ԵՒ ԵՐԵՍ. ԺՈՂՈՎՆԵՐԸ

Հոկտեմբ. 22-ին գումարուել է ազգ. Երես. ժողովը Ղալաթիոյ եկեղեցու մէջ. եկեղեցու բակում խռնուած ամբոխը կամենում է խուժել եկեղեցի, բայց ոստիկանութիւնը արգելում է և ամբոխից 10 — 12 հոգի ձերբակալւում են։ Այս ամբոխման հետեւանքով ժողովը դժուարանում է զբաղուել օրակարգի խնդիրներով։ Միայն որոշել է կոչում անել Ազգ. կենդրոնական վարչութեան, որ վարի իւր պաշտօնը մինչև որ ազգային ժողովը մի որոշում կըտայ իւր հրաժարականին։ Այս որոշումը Մայր դիւանի կողմից հաղորդուել է կրօնական և քաղաքական ժողովի ատենապետներին։ Սակայն քաղաքական ժողովի ատենապետ դոբտ. Սեղբոսեանը բացարձակապէս հրաժարուել է. քաղաքական ժողովի անդամները նոյնպէս տրամադիր չեն պաշտօն վարելու, նոյնն են մտածում և կրօնական ժողովի անդամները, որոնք չեն կամենում առանձին ստանձնել ազգի վարչութիւնը, մանաւանդ այս չփոթ պայմանների մէջ։ Պատրիարքական փոխանորդը հաղորդում է Սրբազան պատրիարքին ազգային ժողովի որոշումը, որ մինչև հրաժարականի խնդրի կարգաւորուելը շարունակի պաշտօնավարել, սակայն Սրբ. պատրիարքը պատրիարքարան չէ գալիս և թղթերին ստորագրում է որպէս «հրաժարեալ պատրիարք»։

Ազգային ժողովի Ա. ատենապետ Դաբրիէլ էֆ. Նուրատունկեանն էլ պատճառաբանելով իւր տկարութիւնը, հոկտմ. 27-ին ուղղել է Բ. ատենապետ Պարգև էֆ. Փափազեանին իւր հրաժարականը։

Հայոց պատրիարքարանի Մայր դիւանը Ազգ. ժողովի գումարման համար հոկտեմ. 25-ին հրատարակում է հետեւեալ ազդը.

«Ազգային ժողովոյ 1910—1911 նստաշրջանի Ա. նիստը տեղի պիտի ունենայ յառաջիկայ ուրբաթ, 29 հոկտեմբեր ժամը ճիշտ 7-ին (ը. թ.) Ղալաթիոյ խորհրդարանին մէջ։

Նկատողութեան առնելով օրակարգի խնդիրներուն ստիպողական հանգամանքը, կխնդրուի, որ հաճիք անհրաժեշտաբար ներկայ գտնուիլ սոյն դռնփակ նիստին, և կատարել Ձեր ազգասիրական պարտականութիւնը։

Մնամ յարգանօք Ազգ. ժողովոյ Բ. ատենապետ
Պարգև Փափազեան.

Օրակարգ

1, Հրաժարական Ազգ. կենդր. վարչութեան Խառն ժողովոյ (շար. վիճաբանութեան).

2, Հրաժարական ամեն. Ս. պատրիարք Հօր.

3, Ընտրութիւն Մայր դիւանի Ազգ. ժողովոյ.

4, Ելևմտացոյց կեդր. ենդուկի 1910 տարւոյ յարակից տեղեկագրով.

5, Երեք առաջարկներ ի մասին միթինգներու.

(Օրակարգի միւս խնդիրները կը մնան նոյնութեամբ, իրենց կարգին նկատողութեան առնելու համար)։

Ատենադպիր Վահան Թէքէեան

Սակայն հոկտեմբերի 29-ին Ազգ. ժողովի նիստը տեղի չի ունենար. որովհետև Ղալաթիայի խորհրդարանի շուրջը մեծ բազմութիւն է խռնուում երկու հակառակ կողմից ևս, որոնք իրար հանդէպ սպասողական դիրք են բռնում, և թէև ոստիկանութիւն էլ չի լինում, բայց բարերաղդաբար ընդհարումն ևս չէ լինում։ Այս ամբոխման վատ հետևանքից զգուշանալով ազգ. ժողովի Բ. ատենապետը ամբիոն բարձրանալով սակաւաթիւ երեսփոխանների ներկայութեան կարդում է.

«Ազգ. ժողովի օրակարգի ստիպողական խնդրոց շուրջը վերջնական համաձայնութեան մը գալու նպատակով,

պատուարժան երեսփոխաններու կողմէ եղած դիմումները ի նկատի առնելով, Մայր Դիւանն որոշեց ՅԵՏԱՁԳԵԼ.

Ազգ. ժողովոյ այսօրուան նիստը։

Գ. Ատենադպիր Բ. Ատենապետ

Տոքտ. Մուրաֆեան Պարգեւ Փափազեան

Ղալաթիոյ խորհրդարան. հոկտմ. 29.

Նոյեմբ. 19-ին Ղալաթիայի լուսաւորիչ եկեղեցու խորհրդարանում գումարած երես. ժողովը աղմկալից է եղել և օրակարգի խնդիրները մնացել են։ Եկեղեցու բակում խռնուած ամբոխը անարգական ցոյց է արել ժողովից դուրս եկող երեսփոխաններին։

Ս. Պատրիարքի, քաղաքական եւ կրօնական ժողովների հրաժարականները ընդունուած.

Նոյեմբերի 26-ին Կ. Պոլսոյ Ազգ. ժողովը ընդունել է Սրբազան պատրիարքի հրաժարականը հետեւեալ բանաձեւով.

«Ժողովս նկատելով, որ Ս. Պատրիարք Հայրն ինքզինքն անբաւական կզգայ իր սկզբունքներով արդիւնաւոր ընծայելու իր պատրիարքական պաշտօնը, կընդունի անոր հրաժարականը, խնդրելով, որ իր պաշտօնը շարունակէ մինչև նոր վարչութեան ընտրութիւնը»։

Ազգ. վարչութեան կրօնական և քաղաքական ժողովների համար նոր ընտրութիւն է կատարուել և սպասւում է հաստատութիւնը կառավարութիւնից։

Ռումանիայի Հայք

Բիւզանդիոնը հաղորդում է, որ Երուսաղէմի Հայոց պատրիարքական տեղապահ Տ. Դանիէլ արքեպիսկոպոսը իւր վերադարձին Ռումանիայից անցնելով, տեսել և հաղորդել է Սրբազան պատրիարքին Ռումանիայի հայերի հոգևոր անմխիթար կացութիւնը, և յայտնել է, որ կարգուի այնտեղ մի հոգևոր տեսուչ կամ առաջնորդ, որը

նիւթականի կողմից դժուարութիւն կրելու չէ։

Տ. Դանիէլ արքեպիսկոպոսը պէտք է տեսակցի Ազատեան Մանուկ էֆէնտիի հետ էլ, որը իբրև Գալացի նախկին ընդհ. հիւպատոս գիտակ տեղական հանգամանքին և ծանօթ Ռումանիայի դեսպանին, վերսկսի իւր բանակցութիւնները դեսպանի հետ, որպէս զի Ռումանիայում նշանակուելիք առաջնորդը ճանաչուի ռումէն կառավարութիւնից և նրա հովանաւորութիւնը վայելի իւր պաշտօնավարութեան ժամանակ։

Տեղական գաւառական ժողովներից ընտրուել են առաջնորդ—Տ. Տրդատ եպիսկոպոսը՝ Տրապիզոնի և Տ. Եղնիկ ծ. վ. Գալփակչեանը՝ Բալուի։

ՀԱՅ ԿԱԹՈԼԻԿ ԵԿԵՂԵՑԻ

Հայ կաթոլիկների պատրիարք Թերզեանը պաշտօնանկ է արել Ս. Յովհաննու Ոսկեբերանի եկեղեցու մեծաւոր Պաքշեան և Երրորդութեան եկեղեցու մեծաւոր Գազրիկեան ծայրագոյն վարդապետներին, որոնք անուանուած են իւր խորհրդականներ, սակայն երկուքն էլ հրաժարուել են այդ տիտղոսական պաշտօններից։ Վարդապետների այս պաշտօնանկութիւնը, որ կատարուել է ուղղակի Թէրզեան պատրիարքի կողմից, համարում է ճնշման հետևանք, որ Հռոմից գործում է Գոյունեան եպիսկոպոսը, վրէժ լուծելով իւր հակառակորդներից։ Թերզեան պատրիարքի Հռոմ գնալն էլ յապաղում է, թէև տեղապահ Ճամճեան եպիսկոպոսը Բրուսայից արդէն Կ. Պոլիս է հասել։

Հռոմում Լևոնեան վարժարանի աշակերտները հայերէն «Դղեակ Լուսաւորչի» անունով սկսել են մի թերթ հրատարակել, ուր փողոցային լեզուով յարձակուելիս են եղել ազգային իրաւունքը պաշտպանող կղերի և ժողովրդեան վերայ, սակայն Թերզեանի խնդրով այդ թերթը խափանուել է։